

## ՄԱՍ 6. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ծառայության աշխատակիցների մասնագիտական որակական կազմը բնութագրվում է տնտեսագետների (43.4%), ինչպես նաև բարձրագույն կրթությամբ կադրերի գերակշռությամբ (86%): Ծառայության աշխատակիցների 73.7%-ը կազմում են կանայք, 26.3%-ը՝ տղամարդիկ:

Ծառայության հաստիքների թվաքանակն ըստ տարիների բնութագրվել է հետևյալ համամասնություններով (հունվարի 1-ի դրությամբ).

	2010թ.	2011թ.	2012թ.
Կենտրոնական ապարատ	181	181	181
Առանձնացված ստորաբաժանումներ	179	179	179
<b>Ընդամենը /Ծառայություն/</b>	<b>360</b>	<b>360</b>	<b>360</b>

Ծառայության համակարգում **աշխատանքի է ընդունվել** 383 մարդ, այդ թվում՝ 2010 թվականին՝ 104, 2011 թվականին՝ 87, 2012 թվականին՝ 192, որից՝

«Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրում՝ 252 մարդ, այդ թվում՝ 2010 թվականին՝ 65, 2011 թվականին՝ 48, 2012 թվականին՝ 139:

Ծառայության աշխատակազմում՝ 131 մարդ, այդ թվում՝ 2010 թվականին՝ 39, 2011 թվականին՝ 39, 2012 թվականին՝ 53, որից՝ քաղաքացիական ծառայողներ 81, այդ թվում՝ 2010 թվականին՝ 19, 2011 թվականին՝ 23, 2012 թվականին՝ 39:

Ծառայության մարդահամարի վարչություն աշխատանքի է ընդունվել՝ 2010 թվականին՝ 32, 2011 թվականին՝ 54, 2012 թվականին՝ 40 հաստիքային աշխատող:

Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման և անցկացման շրջանակում աշխատանքի է ընդունվել 15863 մարդ, այդ թվում՝ համակարգող, տեղամասի վարիչ, օգնական, հրահանգիչ-հսկիչ՝ 2850, հաշվարար՝ 12124, բանվոր՝ 4, ցուցակագրող՝ 660, մուտքագրող-օպերատոր՝ 100 և կոդավորող՝ 125:

Հաշվետու ժամանակահատվածում Ծառայության համակարգում **աշխատանքից ազատվել է** 246 մարդ, այդ թվում՝ 2010 թվականին՝ 77, 2011 թվականին՝ 76, 2012 թվականին՝ 93, որից՝

«Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրից՝ 125 մարդ, այդ թվում՝ 2010 թվականին՝ 48, 2011 թվականին՝ 41, 2012 թվականին՝ 36:

Ծառայության աշխատակազմից՝ 121 մարդ, այդ թվում՝ 2010 թվականին՝ 29, 2011 թվականին՝ 35, 2012 թվականին՝ 57, որից՝ քաղաքացիական ծառայողներ 89, այդ թվում՝ 2010 թվականին՝ 21, 2011 թվականին՝ 23, 2012 թվականին՝ 45:

Ծառայության աշխատակազմում վերապատրաստվել և ատեստավորվել են հետևյալ թվաքանակով քաղաքացիական ծառայողներ.

Քաղաքացիական ծառայության պաշտոնների խմբերը	2010թ.		2011թ.		2012թ.		Ատեստավորման արդյունքում չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոնին
	Վերապատրաստում	Ատեստացիա	Վերապատրաստում	Ատեստացիա	Վերապատրաստում	Ատեստացիա	
բարձրագույն	-	-	1	-	1	2	-
գլխավոր	15	22	25	20	23	22	-
առաջատար և կրտսեր	80	87	79	59	61	74	3
<b>Ընդամենը՝</b>	<b>95</b>	<b>109</b>	<b>105</b>	<b>79</b>	<b>85</b>	<b>98</b>	<b>3</b>

Ծառայության աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար անցկացվել է 48 մրցույթ, այդ թվում՝ 2010 թվականին՝ 16, 2011 թվականին՝ 13, 2012 թվականին՝ 19:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Ծառայության նախագահի և աշխատակազմի ղեկավարի կողմից շնորհվել են համապատասխան դասային աստիճաններ՝ 2010 թվականին՝ 51 քաղաքացիական ծառայողի, այդ թվում՝ առավելագույն դասային աստիճան՝ 31 քաղաքացիական ծառայողի, 2011 թվականին՝ 14 քաղաքացիական ծառայողի, այդ թվում՝ առավելագույն դասային աստիճան՝ 3 քաղաքացիական ծառայողի, 2012 թվականին՝ 82 քաղաքացիական ծառայողի, այդ թվում՝ առավելագույն դասային աստիճան՝ 54 քաղաքացիական ծառայողի:

Պետական կենսաթոշակային սոցիալական ապահովագրության համակարգում անհատական հաշվառման ներդրումն ապահովելու նպատակով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՍԱՊԾ տարածքային կենտրոն է ներկայացվել Ծառայության աշխատակազմի և «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի աշխատակիցների՝ ապահովագրված անձանց մինչև կենսաթոշակային սոցիալական ապահովագրության համակարգում հաշվառելն ընկած

ժամանակահատվածում ձեռք բերած ապահովագրական (աշխատանքային) ստաժի հաշվարկման մասին տեղեկատվություն:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի և Ծառայության միջև էլեկտրոնային տեղեկատվության փոխանակման արդյունավետությունն ապահովելու նպատակով կատարելագործվել է «Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգ» (ՄՌԿՏՀ) ծրագիրը:

Ուսումնական և արտադրական պրակտիկա է կազմակերպվել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (նաև Գյումրիի մասնաճյուղի), ՀՀ պետական կառավարման ակադեմիայի, Հայաստանի պետական ագրարային համալսարանի, Հայ-ռուսական (Սլավոնական) պետական համալսարանի, Երևանի ֆինանսաբանկային և բորսային համալսարանի, Երևանի պետական համալսարանի (նաև Իջևանի մասնաճյուղի), Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի, Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղի, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի, Գավառի պետական համալսարանի, Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի, ՀՀ «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարանի, Ռուս-Հայկական ժամանակակից հումատիտար ինստիտուտի, Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի, Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի, «Մովսես Խորենացի» համալսարանի թվով 775 ուսանողների համար:

Իրականացվել են անձնակազմի կառավարման բաժնի պաշտոնների անձնագրերով սահմանված այլ աշխատանքներ:

Բարեխիղճ աշխատանքի համար Ծառայության նախագահի հրամանով 5 քաղաքացիական ծառայող, իսկ Ծառայության աշխատակազմի ղեկավարի հրամանով 13 քաղաքացիական ծառայող և 47 աշխատակից խրախուսվել են շնորհակալագրերով:

Հայաստանի Հանրապետության նախագահի 2012 թվականի մայիսի 23-ի թիվ ՆՀ-118-Ա հրամանագրով ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Գագիկ Գևորգյանը պարգևատրվել է Անանիա Շիրակացի մեդալով: